

# ՍՈՒՐ և ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ԹՈՒԹՔՈՎ ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## **Ամփոփում**

### ***Նպատակ***

Ուղեցույցը տրամադրում է թուֆքային հիվանդության արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել սուր և քրոնիկական թուֆքով մեծահասակ պացիենտների բուժման արդյունքները:

### ***Մեթոդաբանություն***

Ուղեցույցը կազմված և հաստատված է Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիա հասարակական կազմակերպության ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Ուղեցույցները կազմվել են օգտագործելով հետևյալ գրականության աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2010 թ. “Թուֆքի կառավարման գործնական պարամետրերի” հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է թուֆքային հիվանդության բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Ուղեցույցը նախատեսված է կոլոպրոկոլոգների, վիրաբույժների, գաստրոէնտերոլոգների և առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

### ***Արդյունքներ***

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա, ուղեցույցում լուսաբանվել են թուֆքային հիվանդության սահմանումը, համաճարակաբանությունը, ռիսկի

գործոնները, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Արդյունքում ձևակերպվել է 15 խորհուրդ:

### **Հերևույթուններ**

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության թուրքային հիվանդության վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Խորհուրդների մեծ մասը դասվել են իբրև **ուժեղ**: Այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը սուր և քրոնիկական թուրքով մեծահասակ պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

### **Քանալի բառեր**

*Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, թուրք, թուրքային հիվանդություն, աղիքային արյունահոսություն, սուր թրոմբոզ, արտանկում, թուրքի բուժում:*

### **Պատասխանատու համակարգող**

1. Աբրահամյան Ալեքսանդր Ֆելիքսի՝ բ.գ.թ. Կոլպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, ուսումնական մասի վարիչ, Հայկական Կոլպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

### **Աշխատանքային խմբի անդամներ**

1. Մինասյան Արմեն Միքայելի, Կոլպրոկտոլոգիայի ամբիոնի վարիչ, ԵՊԲՀ-ի պրոռեկտոր, Հայկական Կոլպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր
2. Աղավելյան Ալեքսանդր Մինասի՝ Հայկական Կոլպրոկտոլոգների Ասոցիացիայի նախագահ, բ.գ.դ., Կոլպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
3. Հակոբյան Արամ Սերգեյի՝ բ.գ.դ., Կոլպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, Հայկական Կոլպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ
4. Էյնֆենջյան Արմենակ Կարպի՝ բ.գ.թ. Կոլպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, Հայկական Կոլպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

5. Շահնագարյան Կարեն Լևոնի՝ բ.գ.թ., Կոլտարոկտոլոգիայի ամբիոնի ասիստենտ, Հայկական Կոլտարոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու համակարգողները հայտարարում են, որ շահերի բախում, ֆինանսավորող աղբյուրներ չեն եղել ու չեն ունեցել ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

### **Շնորհակալական խոսք**

Պատասխանատուները իրենց երախտագիտությունն են հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին աջակցություն, խորհրդատվություն և մասնագիտական գիտելիքներ տրամադրած գործընկերներին:

**Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է կոլտարոկտոլոգիական կամ վիրաբուժական բաժանմունքում հոսպիտալացված պացիենտների համար:**

### **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ**

1. Նախաբան.....	4
1.1 Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն.....	5
2. Թուօքբահին հիվանդության սահմանումը .....	6
3. Ախտորոշում.....	7
4. Թուօքբահին հիվանդության բուժում.....	11
4.1 Պահպանողական բուժում.....	11
4.2 Քիչ ինվազիվ բուժման մեթոդներ.....	14
4.3 Վիրաբուժական բուժման մեթոդներ.....	17

4.4 Սուր թուլաբի բուժում.....	21
5. Հետվիրահատական շրջանի վարում .....	22
6. Կանխարգելում.....	22
7. Կանխատեսում.....	23
8. Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ.....	23
9. Գրականություն .....	26
10. Հավելված .....	40

## **Հապավումներ**

ԱԻ՝ Ապացուցողական Ինդեքս

ՈՍՀԴ՝ Ոչ ստերոիդ Հակաբորբոքային դեղամիջոցներ

ՊԲՎՓ՝ Պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ԽԱ՝ Խորհուրդների աստիճան

ԱՄ՝ Ապացուցողական մակարդակ

ACRS - (American Society of Colon and Rectal Surgeon)՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության

### **1. Նախաբան**

Թութաբային հիվանդությունը բնակչության շրջանում ամենատարածվածիցներից է և կազմում է 135-140 պացիենտ 1000 բնակչությանը, իսկ հաշված կշիռը հաստ աղիքի հիվանդությունների ամբողջական կառուցվածքում կազմում է 34-41% [1]: Հիվանդությունը հավասարաչափ բաշխված է կանանց և տղամարդկանց միջև: Ժամանակակից կյանքի ռիթմը ուղեկցվում է քիչ շարժուն ապրելակերպի շատացմամբ: Պարտադրված երկարատև նստակյաց կյանքը համակարգչի դեմ, աշխատանքի վայրում, ավտոմեքենայի դեկին և այլն զուգակցվում են գրեթե մշտական արյան կանգով փոքր կոնքում և հատկապես՝ ուղիղ

աղիքում, որը իր հերթին բերում է թուփքային հիվանդության զարգացմանը, հատկապես՝ երիտասարդ և աշխատունակ տարիքում [1]:

### **1.1 Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Տվյալ ուղեցույցները կազմված են Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Ստացված արձանագրությունները մանրակրկիտ քննարկվել և համակարգվել են Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության նիստին: Գրականության աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ 2006-2016 թթ շրջանում իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խորհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներ են հանդիսացել հետևյալ շտեմարաններից գրականության և կլինիկական ուղեցույցների աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2010 թ. “Թուփքի կառավարման գործնական պարամետրերի” հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology, CochraneCollaboration: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Համաճարակաբանության, ծագումնաբանության, ախտաճանության, դասակարգմանը և սահմանմանը վերաբերվող խորհուրդները ընդգծված են տեքստում և ուղեկցվում են համապատասխան ապացուցողականության մակարդակի (ԱՄ) և խորհուրդների աստիճանի (ԽԱ) բնութագրերով: Ամերիկյան մասնագիտական միավորման փաստաթղթից վերցված խորհուրդներին հաջորդում

է ACRS հապավումը: Բուժական և ախտորոշմանը վերաբերվող խորհուրդները տրված են առանձին համարակալված տեսքով:

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել հայկական Կոլոպրոկտոլոգների միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է թութքային հիվանդությունով բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Ուղեցույցը նախատեսված է կոլոպրոկտոլոգների, վիրաբույժների, գաստրոէնտերոլոգների և առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

## **2. Թութքային հիվանդության սահմանումը**

**Թութք** – թութքային հանգույցների ախտաբանական մեծացում (ներքին հանգույցները՝ ներքին թութք, արտաքինները՝ արտաքին թութք): Կոմբինացված թութք - արտաքին և ներքին հանգույցների միաժամանակյա մեծացում: Թութքային հանգույցների ախտաբանական մեծացման պատճառ են հանդիսանում փապարային մարմինների արյունամատակարարման քրոնիկական և սուր խանգարումները: Արյունամատակարարման խանգարումից բացի թութքի զարգացմանը նպաստում են թութքային հանգույցներում դիստրոֆիկ փոփոխությունները: Թվարկված գործոնների ազդեցության տակ թութքային հանգույցները մեծանում են չափերով, կորցնում են էլաստիկությունը և գործընթացի շարունակության դեպքում, արտանկում են դեպի դիստալ: Պահող ապարատում աճում են դիստրոֆիկ պրոցեսները, և թութքային հանգույցները սկսում են արտանկել հետանցքային ուղուց: Ուղիղ աղու ենթալորձային շերտի ուղղահայաց

մկանի և Պարկսի կապանի ձևախախտման գործընթացի զարգացումը բերում է թութքային հանգույցների աստիճանական արտանկմանը:

### 3. Ախտորոշում

Թութքի ախտորոշումը հիմնված է գանգատների գնահատման, հիվանդության տևողության, մատնային և գործիքային հետազոտման վրա (ԱՄ – 2B, ԽԱ– B) [8]:

Քրոնիկական թութքի հիմնական ախտանիշներին է դասվում ներքին հանգույցների արտանկումը հետանցքային ուղուց կղազատման ժամանակ, կղազատման ժամանակ արյան առկայությունը, արտաքին մեծացած թութքային հանգույցների առկայությունը: Ավելի հազվադեպ հանդիպող ախտանիշներից են տհաճության զգացողությունը, քորը, խոնավությունը հետանցքի շրջանում, գրգռվածության զգացողությունը, ուղիղ աղուց լորձային արտադրությունը: Քրոնիկական թութքի ժամանակ ցավի առկայությունը կապված է հիվանդության բարդացման հետ (թրոմբոզ): Սուր թութքի հիմնական ախտանիշներին է դասվում՝ հետանցքի շրջանի սուր ցավերը, արտաքին և ներքին թութքային հանգույցների շրջանում ցավոտ և պինդ գոյացության ի հայտ գալը, առատ արյունահոսությունը հետանցքից, որը չի դադարում պահպանողական միջոցների կիրառումից:

#### ***Անամնեզի (վերհուշ) հավաքում:***

Ի հայտ են բերվում հիվանդության առաջացման էթիոլոգիական գործոնները՝ ստամոքս-աղիքային խանգարումներ, սննդակարգի խանգարում, ալկոհոլի չարաշահում, նստակյաց կամ քիչ շարժուն կյանքի կենսակերպ, հղիություն և ծննդաբերություն:

### ***Ջննում կոլոպրոկտոլոգի կողմից:***

Պացիենտը զննվում է՝

1. գինեկոլոգիական աթոռի վրա՝ մեջքի վրա պառկած և ոտքերը առավելագույն ծավաճ դեպի որովայնը
2. կողքի վրա՝ ոտքերը առավելագույն ծավաճ դեպի որովայն
3. ծունկ-արմունկային դիրքում

Հետանցքի և շեքի շրջանի արտաքին զննման ժամանակ ուշադրություն է դարձվում հետանցքի ձևի, սպիական փոփոխությունների կամ ձևափոխությունների, մաշկային ծածկույթների տեսքի վրա:

Գնահատվում են արտաքին թուրքային հանգույցները, ներքին հանգույցների արտանկման աստիճանը և նրանց ինքնուրույն ներուղղման հնարավորությունը [1, 4, 9]:

### ***Ուղիղ աղու մարնային հեղազդություն:***

Գնահատվում է հետանցքային սեղմանի կծկողական հիանարավորությունը, ցավոտությունը, հետանցքային ուղու լորձաթաղանթի և թուրքային հանգույցների վիճակը, հետանցքային ուղու և ուղիղ աղու ծավալային գոյացությունների առկայությունը [1, 4, 9]:

### ***Անոսկոպիա:***

Ցանկալի է օպտիկական անոսկոպով, հնարավորության դեպքում ռեկտալ հայելու օգնությամբ: Ջննվում են անալ ուղու և ուղիղ աղու հեռակա հատվածը, գնահատվում են ներքին թուրքային հանգույցները, լորձաթաղանթի վիճակը, ատամնավոր գիծը անալ կրիպտաների հետ, ուղիղ աղու ստորամայույթի հատվածի լորձաթաղանթը:



**Ռեկտոռոմանուսկոպիա:**

Դիտվում է օպտիկական ռեկտոռոմանուսկոպով մինչև 30սմ հետանցքից վեր: Ուղիղ և սիզմայածև աղու ստորին հատվածի զուգակցող հիվանդությունների ախտորոշում:

**Կոլոնոսկոպիա և իրիգոսկոպիա:**

Հաստ աղու հիվանդությունների ախտորոշում: Կոլոնոսկոպիան և իրիգոսկոպիան ցուցված են հաստ աղու ուռուցքային և բորբոքային հիվանդությունների բացառման համար (50 տարեկանից բարձր բոլոր պացիենտներին [10-11] :

**Խորհուրդ 1.**

**Թուրքով պացիենտների գնահատումը պետք է իրականացնել հիվանդության պատմության և ֆիզիկական հետազոտության հիման վրա: Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ցածր որակի ապացուցողականություն-1C [ASCRS]:**

*Թուրքի ախտորոշումը հիմնականում միշտ կլինիկական է: Նախնական գնահատումը պետք է ընդգրկի մանրակրկիտ նպատակաուղղված վերհուշի հավաքումը և ֆիզիկական քննությունն՝ ուղղված ախտանիշների ձգվածության, սրության, փրկության վրա, ինչպիսիք են արյունահոսությունը, արտանկումը, հիգիենայի հետ կապված խնդիրները, ցավը, նաև բջջանյութի և հեղուկների ընդունումը: Ի հավելում, պետք է ուշադիր վերանայել աղիքների աշխարանքը՝ ներառյալ հաճախականությունը, համակազմվածքը, դատարկման հեշտությունը: Ուղիղ աղիքային արյունահոսություն ունեցող բոլոր պացիենտները պահանջում են մանրամասն ընդհանրական պատմության հավաքում՝ հիմնական շեշտը դնելով աղիքային հիվանդության առկայության վրա: Չարորակ նորագոյացությունների*

առկայությունը պետք է գնահատվի որոշելու համար արդյոք հասար և ուղիղ աղիքի քաղցկեղի դեպք է եզակի թե ժառանգական: Այդպիսով անհրաժեշտ է աղիքային ընդլայնված գնահատում [ASCRS-2010]:

### **Խորհուրդ 2.**

Մինչ պացիենտի բուժման ձևն ընտրելը կատարել պացիենտի լիարժեք հետազոտում հիվանդության աստիճանը պարզելու նպատակով – **(կարևոր է բուժման տեսակի ընտրության համար)** [56-58]: Կատարել պացիենտի հետազոտումը թիմային սկզբունքով – կոլոպրոկտոլոգների կողմից գնում և էնդոսկոպիկ հետազոտություններ, ճառագայթաբանների կողմից ճառագայթային հետազոտություններ **(կարևոր է ճշգրիտ ախտորոշման հաստատման համար)** (The American Society of Colon and Rectal Surgeons. Practice Parameters for the Management of Hemorrhoids. [2005, [2, 3, 14]: Center for Evidence-based Medicine — Levels of evidence.)

### **Խորհուրդ 3.**

Աղիքի էնդոսկոպիկ գնահատումը ցուցված է թուրքով և ուղիղ աղիքային արյունահոսությամբ պացիենտներին: Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ միջին որակի ապացուցողականություն - 1B [ASCRS]:

#### *Մեջբերում*

Չնայած շատ անգամ ուղիղ աղիքային արյունահոսությունը կապված է թուրքի հետ, սակայն այս գանգալը կարող է նաև ուրիշ հիվանդության ախտանիշ լինել, ինչպես հասար և ուղիղ աղիքային քաղցկեղը, աղու բորբոքային հիվանդությունները, այլ կոլիտներ, դիվերտիկուլյար հիվանդությունը: Լիակատար անձնական և մանրամասն ընդհանրական պատմությունը և ֆիզիկական քննությունը, վերջինս կարող է ընդգրկել

պրոկտոսկոպիան և/կամ ճկուն կոլոնոսկոպիան, կանձնավորեն բարձր ռիսկային պացիենտներին, ում պեղք է ավելի լայնածավալ գնահատում [ASCRS-2010]:

#### **Խորհուրդ 4.**

**Պացիենտի հետազոտման ժամանակ հաշվի առնել հնարավոր ուռուցքային բարձր ռիսկը (կարևոր է գուգակցող օրգանական պաթոլոգիան ժխտելու/հաստատելու համար)** (The American Society of Colon and Rectal Surgeons.Practice Parameters for the Management of Hemorrhoids. [2005, [2-5]: Center for Evidence-based Medicine — Levels of evidence.)

**Այլ օրգան համակարգերի հիվանդությունների առկայության ժամանակ ցուցված են համապատասխան մասնագետների խորհրդատվություններ:**

#### **4. Թութքային հիվանդության բուժում**

##### **4.1 Պահպանողական բուժում**

Թութքային ախտանիշների բուժման հիմնական մեթոդը հանդիսանում է ստամոքս-աղիքային տրակտի գործունեության կարգավորումը և փորկապության վերացումը՝ համապատասխան քանակության հեղուկների և բջջանյութի օգտագործման միջոցով:

#### **Խորհուրդ 5.**

**Սննդային փոփոխությունները՝ ներառյալ բավարար հեղուկների և բջջանյութի ընդունումը հանդիսանում է նախնական առաջին-գիծ ոչ վիրահատական թերապիա ախտանշանային թութքով պացիենտների համար: Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ միջին որակի ապացուցողականություն - 1B [ASCRS]:**

## Մեջբերում

Ախտանշանային թուրքով պացիենտների համար մեծ դեր են գրավում փորկապությունը և աղիների խանգարված աշխատանքը: Հեղուկի և բջջանյութի մեծ քանակների ընդունումը լավացնում է թեթևից չափավոր արտանկումն ու արյունահոսությունը, մինչդեռ առավել հաստատակամ գրասենյակային կամ վիրահատական բուժումն անհրաժեշտ է բարձր կարգի թուրքի (III-IV կարգի ակնհայտ արտաքին բաղադրիչով) դեպքում: Քոքրեյնի ակնարկը 7 ռանդոմիզացված հետազոտությունների մասին էր: Ընդգրկված էին 378 պացիենտներ, որոնցից մեծ քանակով բջջանյութ ընդունողները նշում էին և՛ ախտանշանային արտանկման (RR 0.53, 95% CI 0.38 –0.73), և՛ արյունահոսության (RR 0.50, 95% CI 0.28 –0.89) բարելավում [ASCRS]:

### **խորհուրդ 6.**

**Թուրքային հիվանդությամբ պացիենտներին մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել՝**

- Թթվային կաթնամթերք
- Բանջարեղեն
- Բանջարեղենային աղցաններ
- Բուսական ձեթ
- Շիլաներ
- Եփած միս, ձուկ, հավ
- Բանջարեղենային ապուրներ [1, 4, 75, 76]

### **խորհուրդ 7.**

**Թուրքային հիվանդությամբ պացիենտներին մենք խորհուրդ չենք տալիս օգտագործել՝**

- *Լորի, սիսեռ*
- *Կծու համեմունքներ*
- *Շոկոլադ, կակաո, մուգ թեյ*
- *Թթու բանջարեղեն*
- *Լորձային ապուրներ*
- *Ալկոհոլ [1, 4, 75, 76]*

***Խորհուրդ 8.***

**Թութքային հիվանդության բուժման մեջ ընդգրկել ստամոքս-աղիքային տրակտի գործունեության կարգավորումը և փորկապության վերացումը (ԱՄ – 2B, ԽԱ - B) [14-17]:**

***Խորհուրդ 9.***

**Թութքային հիվանդության I աստիճանի ժամանակ կիրառել դեղորայքային բուժում, որի նպատակն է՝ (ԱՄ -5, ԽԱ - D) [4, 9, 18-20]:**

- Սուր թութքի ախտանիշների թուլացում
- Բարդությունների կանխարգելում
- Քրոնիկական ընթացքի ժամանակ սրացման կանխարգելում
- Նախավիրահատական պատրաստում

**Սակայն միայն պահպանողական բուժումը, որը ուղված է ստամոքս-աղիքային ուղու աշխատանքի կարգավորմանը, չի հանդիսանում թութքի բուժման ինքնուրույն արդյունավետ միջոց, հատկապես 3-րդ և 4-րդ աստիճանի դեպքում (ԱՄ- 2B, ԽԱ - B) [15-18]:**

**Խորհուրդ 10.**

**Նախա- և հետվիրահատական շրջաններում կիրառել հետևյալ դեղորայքային միջոցները (ԱՄ – 2B, ԽԱ - B) [15-18]**

- կոմբինացված ֆլեբոտոնիկ պրեպարատներ
- տեղային համակցված ցավազրկող և հակաալոցային պրեպարատներ՝ գելերի, քսուքների, կրեմների և մոմիկների տեսքով՝
- Ոչ թմրադեղ ցավազրկողներ նախավիրահատական/ամբուլատոր և հետվիրահատական շրջանում՝
- Սուր թրոմբոզի ժամանակ տեղային ազդեցության հակամակարդիչներ՝ քսուքների և մոմերի տեսքով

**4.2 Քիչ ինվազիվ բուժման մեթոդներ**

**Խորհուրդ 11.**

*I, II, և III աստիճանի թուրքով պացիենտների մեծ մասը, ում մոտ դեղորայքային բուժումը ձախողվում է, հնարավոր է լինում արդյունավետորեն բուժել գրասենյակային պայմաններում, օրինակ՝ լիզավորում, սկլերոթերապիա, ինֆրակարմիր կոագուլիացիա: Թուրքի լիզավորումն ամենաարդյունավետ փիպական փարբերակն է: Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ միջին որակի ապացուցողականություն - 1B [ASCRS]:*

*Մեջբերում*

*Գրասենյակային եղանակների նպատակները երեքն են՝ իջեցնել անոթայնությունը, փոքրացնել ավելորդ հյուսվածքները, մեծացնել թուրքային ամրագրումն ուղիղ աղիքի պատին՝ արտանկումը նվազեցնելու համար: Այս եղանակները համեմատաբար լավ փանելի են՝ պատճառելով նվազագույն ցավ և փհածություն: Այնուամենայնիվ, պացիենտները պետք է հասկանան, որ կա կրկնման*

հավանականության և կարող է անհրաժեշտ լինել մեթոդների կրկնակի կիրառում [ASCRS-2010]:

### **Խորհուրդ 12.**

**Թութքային հիվանդության I աստիճանի պահպանողական մեթոդների անարդյունավետության և II-III աստիճանի դեպքում ցուցված են քիչ ինվազիվ վիրաբուժական մեթոդներ՝ (ԱՄ -1B, ԽԱ - B) [27, 30, 38, 39] [ASCRS]:**

#### **4.2.1 Ներքին թութքի սկլերոթերապիա**

Ցուցումները՝ 1-3աստիճանի արյունահոսող թութքի դեպքում, ավելի մեծ արդյունավետություն գրանցվում է 1-2 աստիճանի դեպքում:

Հակացուցում է հանդիսանում սուր թութքը, սուր պարապրոկտիտը, հետանցքային ճաքը: Մեթոդը. անոսկոպի միջոցով թութքի հանգույցների հայտնաբերումից հետո ասեղի միջոցով կատարվում է սկլերոզացնող նյութի ներարկում ներքին թութքի հանգույց 45 աստիճան թեքությամբ: Ասեղը մտցվում է մոտ 1.0-1.5սմ: Թութքի հանգույցի մեծությունից կախված ներարկվում է 0.5-3.0մլ: Սկլերոզացնող նյութերից առավել հաճախ օգտագործվում է դետերգենտներ՝ նատրիումի տետրադեցիսուլֆատ, պոլիդոկանոլ: Տվյալ մեթոդի էֆեկտիվությունը կազմում է մոտ 75-89%: Հետվիրահատական շրջանը բնութագրվում է ցավի թուլացմամբ կամ ընդհանրապես բացակայությամբ:

#### **4.2.2 Ինֆրակարմիր ֆոտոկոագուլյացիա**

Ցուցումները՝ 1-2 աստիճանի արյունահոսող թութքի դեպքում: Հակացուցումները՝ շեքի և անոռեկտալ շրջանի բորբոքային պացիենտություններ: Մեթոդը՝ լույսի աղբյուրի միջոցով կատարվում է ջերմային հոսքով թութքի հանգույցի ոտիկի կոագուլյացիա: Լույսի աղբյուրը տեղափոխելով 45 աստիճան աջ և ձախ

կատարվում է թութքի հանգույցի ոտիկի կոագուլյացիա 3-4 կետերով, նրանց արանքում թողնելով 0.5սմ տարածք: Յուրաքանչյուր հանգույցի վրա ազդելու տևողությունը, կախված ոտիկի մեծությունից, լինում է 1-3 վարկյան: Տվյալ մեթոդի էֆեկտիվությունը կազմում է մոտ 60-70%: Թութքի ուշացած աստիճանների ժամանակ տվյալ մեթոդը քիչ արդյունավետ է :

#### **4.2.3. Թութքի հանգույցների վակուումային լիզավորում լարեքսայն օղերով**

Ցուցումները՝ 2-3 աստիճանի թութք (ներքին հանգույցների հստակ սահմանների դեպքում):

Հակացուցումները՝ ցիրկուլյար (շրջագծային) թութք, ներքին հանգույցների հստակ սահմանների բացակայություն, անալ ճաք, ուղիղ աղու խուլակներ:

Մեթոդը. ներքին հանգույցին անոսկոպի միջոցով մոտեցնում են լիզատորը, որը միացված է պոմպին: Ատամնավոր գծից մոտակա հանգույցի հատվածը ներքաշվում է լիզատորի մեջ: Ներքաշված հանգույցի վրա դրվում է ռետինե օղը: Լիզատորը հանվում է: Տվյալ մեթոդը համարվում է արդյունավետ և ունի կրկնման ցածր հավանականություն, սակայն մյուս մեթոդների համեմատ ցավային ախտանիշը արտահայտված է: Տվյալ մեթոդի դեպքում հնարավոր է արտաքին թութքի թրոմբոզի առաջացում, ավելի հազվադեպ բորբոքային բարդություններ: 2 հանգույցների միանվագ լիզավորման ժամանակ հնարավոր է վագուսային ախտանիշների ի հայտ գալը (բրադիկարդիա, հիպոտոնիա, կոլապս), ինչպես նաև մեծանում է կրկնման հավանականությունը: Բուժման լավ արդյունքներ կազմում են 65-85% [26-28]:

#### **4.2.4. Թութքային հանգույցների դեզարտերիզացիա՝ ուլտրաձայնային դոպլերոմետրիայի հսկողությամբ**

Ցուցումները՝ 2-4 աստիճանի թութքի դեպքում, ավելի էֆեկտիվ է 2-3 աստիճանի դեպքում:



Հակացուցումները՝ շեքի և անոռեկտալ շրջանի բորբոքային պացիենտություններ:

Մեթոդիկան՝ ուլտրաձայնային դոպլերով հագեցած անոսկոպի միջոցով ի հայտ են բերվում վերին ուղիղ աղիքային զարկերակի ճյուղերը ըստ ժամ սլաքի, որոնք անոսկոպի պատուհանի միջից կարվում և կապվում են 2-4սմ անոռեկտալ գծից վեր: Որպես կանոն կարվում են միջինը 3-6 անոթ: Տվյալ մեթոդի արդյունավետությունը 2-3 աստիճանի թուրքի դեպքում կազմում է մոտ 81%: Հետվիրահատական շրջանում թմրադեղ ցավազրկողների կարիք չկա: Վերականգնումը կարճ է՝ հետվիրահատական թույլ արտահայտված ցավի պատճառով

#### **4.3 Վիրաբուժական բուժման մեթոդներ**

**Խորհուրդ 13.**

**Թուրքային հիվանդության վիրաբուժական բուժումը սկսել պացիենտի աղիների ճշգրիտ կոմբինացված նախապատռաստումից՝ օրտոգրադ և ռետրոգրադ (մաքրող հոգնաներ): (ԱՄ – 2B, ԽԱ - B) [15-18]:**

**Խորհուրդ 14**

**Վիրաբուժական թուրքահատում պետք է իրականացնել այն պացիենտների մոտ, ովքեր կայուն են գրասենյակային եղանակների հանդեպ, ունեն մեծ թուրքային հանգույցներ, արտաքին և ներքին կոմբինացված թուրք՝ նշանակալի արտանկմամբ (III-IV աստիճան): Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ միջին որակի ապացուցողականություն - 1B[ASCRS]:**

*Մեջբերում*

*Վիրահատական բուժումը մնում է զգալի արդյունավետ եղանակ: Ընդհանրապես, այն պետք է իրականացվի գրասենյակային բուժմանը չենթարկվող կամ չհանդուրժող, III ից-IV աստիճանի թուրքով, ծավալուն մաշկային ավելցուկներ*

ունեցող պացիենտների մոտ: 18 հեռանկարային ուսումնասիրություն ընդգրկող մեդասանալիզում, որտեղ թուֆախապումը համեմարվում էր գրասենյակային եղանակների հետ, ցույց տրվեց, որ թուֆախապումն առավել արդյունավետ է III աստիճանի թուֆի դեպքում: Այդուհանդերձ այն կապված է սաստիկ ցավերի և բարդությունների մեծ ռիսկի հետ: Թե՞ բաց, թե՞ փակ թուֆախապումը հնարավոր է իրականացնել վիրաբուժական բազմաթիվ գործիքների օգնությամբ՝ ներառյալ վիրաբուժական նշտարը, մկրատը, միաբևեռ կաուտերիզացիան, երկբևեռ էներգիան, ուլտրաձայնային սարքավորումները: Այսպիսով՝ պետք է հաշվի առնել անհատական գործոնները և նախընտրությունները մինչ վիրահատական բուժման անցնելը: Վերջերս կատարված the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon (ASCRS)-ի կողմից մեդասանալիզում, որն ընդգրկում էր 12 ուսումնասիրություններ, 1142 պացիենտ, ցուցադրվեց, որ երկբևեռ էներգիայով կատարված միջամտությունները ավելի արագ են իրականացման մեջ և ընձեռում են ավելի քիչ հետվիրահատական ցավեր, քան դասական թուֆախապման ժամանակ: Հարկավոր են լրացուցիչ հետազոտություններ ուղղված վիրահատության բարձր արժեքներին, որպեսզի որոշվի յուրաքանչյուր վիրահատական տարբերակի հարաբերական տեղը:

### **Խորհուրդ 15.**

**Թուֆային հիվանդության III-IV աստիճանի բարդությունների առկայության դեպքում՝ – առատ կրկնվող արյունահոսություններ, ամենօրյա հանգույցների արտանկում, հաճախակի սուր թրոմբոզի երևույթներ – կիրառել հետևալ վիրաբուժական մեթոդներից մեկը՝ (ԱՄ -1A, ԽԱ - B) [1, 4, 7, 16, 21, 45-59]:**

- Փակ թուֆախատում (անալ ուղու լորձաթաղանթի վերականգնումով)
- Բաց թուֆախատում
- Ենթալորձաթաղանթային թուֆախատում

Թութքահատունը հանդիսանում է թութքի ամենաարդյունավետ բուժումը: Մինևույն ժամանակ հետվիրահատական ընթացքում անհրաժեշտ է վերականգնողական շրջան և առկա է հետվիրահատական բարդությունների առաջացման հավանականություն, որը չի հանդիպում մյուս մեթոդների դեպքում: Ավելի հաճախ օգտագործում են թութքահատման բաց և փակ մեթոդները, որոնք հնարավոր է իրականացնել նշտարի օգնությամբ, դիաթերմոկոագուլյացիայի, լազերային կամ ուլտրաձայնային մկրատներով:

#### **4.3.1. Փակ թութքահատում (հետանցքային ուղու լորձաթաղանթի վերականգնումով)**

Մեթոդը. ատամնավոր գծից վեր թութքի հանգույցի ոտիկի վրա դրվում է սեղման: Թութքի հանգույցը հատվում է մինչև անոթային ոտիկը, նրա հետագա կարումով և կապումով: Հանգույցը հատվում է կապած տեղից հեռակա: Վերքը կարվում է առանձին կարերով կամ անընդհատ կարերով՝ ընդգրկելով հատակը: Արտաքին հանգույցը հեռացվում է ներքինի հետ միանվագ կամ առանձին: Վերքը նույնպես կարվում է լուծվող թելերով՝ առանձին կամ անընդհատ:

#### **4.3.2 Բաց թութքահատում**

Կիրառվում է 3-4 աստիճանի դեպքում, որպես առանձին մեթոդ, նաև համակցված թութքի դեպքում (հետանցքային ուղու բորբոքային հիվանդությունների դեպքում՝ խուղակ, ճաք): Բարդություններից ավելի հաճախ հանդիպում է հետանցքային անկղապահություն (8%), սուր միզակապություն (1%), վաղ հետվիրահատական արյունահոսություն (2%):

#### **4.3.3 Ենթալորձաթաղանթային թութքահատում**

Մեթոդը թույլ է տալիս առանց ձգման և ձևախախտման վերականգնել հետանցքային ուղու կամ ուղիղ աղու լորձաթաղանթը ենթալորձաթաղանթի հետ

միասին: Կախված այն բանից, որ փապարային մարմինների ենթալորձային հեռացման ժամանակ հաճախանում է հյուսվածքների արյունահոսության հավանականությունը, վիրահատությունը ընթանում է գործնական դժվարություններով: Բարդություններից ավելի հաճախ հանդիպում է ռեֆլեկտոր միզակապություն (6%), վաղ հետվիրահատական արյունահոսություն (1.5%):

Մեթոդը. ներքին թուրքի ենթալորձային շերտ ներարկվում է 2-3մլ 0.25% նովոկաինի լ-թ, առաջացնելով հիդրավիկ բարձիկ: Երկու կիսալուսնաձև կտրվածքներով հատվում է հանգույցի լորձաթաղանթը, այն հեռացվելով շրջակա հյուսվածքներից մինչև անոթային ոտիկը: Հետո ոտիկը կարվում է, հանգույցը՝ հեռացվում: Լորձաթաղանթը վերականգնվում է առանձին կարերով՝ հանգույցի ոտիկը խորասուզելով ենթալորձային շերտ:

#### 4.3.4 **Թուրքահատում LigaSure™, UltraCision™ սարքերով:**

Տվյալ մեթոդների կիրառումը 3-4 աստիճանի թուրքի դեպքում թույլ է տալիս բավականին իջեցնել ցավի ուժգնությունը, կրճատել վերականգնման ժամանակը, իջեցնել դիզուրիկ երևույթները:

Լավ արդյունքներ են ստացվում պացիենտների 96.4% մոտ:

1. LigaSure™ ապարատով թուրքահատումից հետո բավականին իջնում է ցավային ախտանիշը, հատկապես առաջին հետվիրահատական օրը, նվազում է վիրահատական արյան կորուստը: Վիրահատության ընթացքը կրճատվում է մինչև 9-15րոպե: Վերականգնողական շրջանի կրճատում:
2. LigaSure™ ապարատով թուրքահատումից վերքի եզրերի վաղ հեռանալուց հետո նշվում է նրա երկարատև լավացում:
3. LigaSure™ ապարատով թուրքահատումը, համեմատելով ուրիշ վիրաբուժական մեթոդների հետ, բարդությունների հաճախականությամբ չունի էական տարբերություն:

Մեթոդը ներքին թուփի հանգույցը վերցվում է Լուերի սեղմանով, կարվում է հանգույցի ոտիկը: Թուփի հանգույցի վրա դրսից ներս դրվում է ապարատի սեղմանը, հետագա կոագուլյացիայով: Հանգույցը դրսից ներս հատվում է մինչև ոտիկը: Ոտիկի կոագուլյացիան կատարվում է երկու անգամ՝ սեղմանը տեղափոխելով այնպես, որ կոագուլացվող հատվածների միջև տարածություն չմնա: Հետո հանգույցը ամբողջությամբ հեռացվում է:

Մեթոդը UltraCision™ ապարատով կատարվում է արտաքին թուփի հյուսվածքների հատում՝ հիմքի շրջանում ուլտրաձայնային մկրատով: Այնուհետև փուլային հեռացվում են արտաքին և ներքին հատվածները միանվագ: Անոթային ոտիկի մշակումը իրականացվում է կոագուլյացիայով:

#### **4.4 Սուր թուփի բուժում**

Արտաքին թուփի թրոմբոզի բուժումը ներառում է վիրաբուժական շտկում և պահպանողական միջոցառումների կիրառում:

##### ***Խորհուրդ 15.***

**Արտաքին թրոմբված հանգույցներով պացիենտների մեծ մասի մոտ նշվում է բարելավման ցուցանիշների բարձրացում, եթե կատարվում է վիրահատական հեռացում ախտանշահամալրի ի հայտ գալուց 72 ժամվա ընթացքում: Խորհրդի աստիճանը. Խիստ խորհուրդ՝ ցածր որակի ապացուցողականություն - 1C [ASCRS]:**

##### ***Մեջբերում***

*Չնայած շատ պացիենտներ իրենց ախտանիշների վերջնական լուծումը գտնում են պահպանողական բուժման արդյունքում, այդուհանդերձ արտաքին թմրոմբված հանգույցների հեռացումը բերում է ախտանիշների առավել արագ լուծմանը,*

կրկնության ցածր հավանականությանը, ախտադադարի երկար պահպանմանը: [ASCRS-2010]:

1. Հիվանդության սկսման պահից 72 ժամ անց թուփի հանգույցների սուր թրոմբոզի վիրաբուժական բուժումը բերում է վերականգնողական ժամանակի կրճատման:
2. Ստացիոնար պայմաններում վիրաբուժական բուժումը ցուցված է մեծ թրոմբված հանգույցների դեպքում, և երբ բորբոքային պրոցեսը տարածվում է շրջակա հյուսվածքների վրա:
3. Երբ հիվանդության սրացումից անցել է 72 և ավելի ժամ, պահպանողական թերապիան ուղված է ցավային ախտանիշի և բորբոքային պրոցեսի թուլացմանը, հետագա վիրաբուժական բուժմամբ:

#### **5. Հետվիրահատական շրջանի վարում**

Հետվիրահատական ընթացքում մինչև վերքի լավանալը, պացիենտներին ցուցված է կանոնավոր կատարել անալ շրջանի լվացումներ՝ օգտագործելով հակասեպտիկ լոծոյթներ: Նաև կատարել ամենօրյա վիրակապություններ՝ օգտագործելով համապատասխան քսուքներ [4, 9, 18]:

Անհրաժեշտ է մինչև կազդուրման ավարտը բժշկի մշտադիտարկում: Բուժման ամբողջ ընթացքում անհրաժեշտ է պահել համապատասխան սննդակարգ՝ հարուստ բուսական բջջանյութով, կղանքը փափկեցնելու նպատակով:

#### **6. Կանխարգելում**

Վերջինիս հիմքում ընկած է ստամոքս-աղիքային ուղու գործունեության բարելավում, փորկապությունների վերացում, հիգիենայի ռեժիմի պահպանում: Թութքին բնորոշ ախտանիշների ի հայտ գալուն պես պետք է դիմել պրոկտոլոգին:

Հիվանդության ախտորոշումը և բուժումը վաղ աստիճանների ժամանակ բերում է բարդությունների հաճախականության նվազմանը և դրական ընթացքին:

## **7. Կանխատեսում**

Թութաբային հիվանդության տարբեր աստիճանների ժամանակ տարբերակիչ բուժման մոտեցումները, քիչ ինվազիվ մեթոդների ճշգրիտ կիրառումը, թույլ է տալիս հասնել լավ արդյունքների 98-100 % պացիենտների մոտ [1, 2, 4, 9]:

## **8. Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի (հուշաքննության) ցուցանիշներ**

Թութաբային հիվանդության վարման արդի պահանջները հնարավոր է ապահովել Հայաստանի բուժ-հաստատություններում ներդնելով հետևյալ գործառույթները՝

- *Գործելակարգեր, ընթացակարգեր, որոշումների ընդունման աջակցման համակարգեր (Decision Support System),*
- *Շարունակական ինտերակտիվ կրթական միջոցառումներ*
- *Աուդիտ(հուշաքննություն) տեղայնացված ցուցանիշների կիրառմամբ*
- *Ֆինանսական մեխանիզմներ*
- Նեղ մասնագետների (կոլոպրոկտոլոգների) պարբերաբար և համահունչ ընդգրկվածությունը Հայաստանի բուժհաստատություններում պացիենտների բուժմանը՝ խորհուրդատվությունների, համայցների, ընդհանուր կատարված վիրահատական միջամտությունների ձևով:

Գործելակարգերը պետք է ընդգրկեն տվյալ բուժհաստատության պայմաններում պացիենտների համալիր վարման որևէ բաղադրիչի մանրամասն նկարագրություն: Գործելակարգում նշված բոլոր քայլերը և նրանց հերթականությունը կրում են պարտադիր բնույթ և ենթակա չեն կամայական մեկնաբանությունների: Ցանկացած շեղում հանդիսանում է հիմնավորումների և ընդլայնված ձևաչափով քննարկումների հիմք:

